ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 07 սեպտեմբերի 2021թ.

2021 թվականի սեպտեմբերի 7-ին, ժամը 14:00-ին Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված սոցիալական, առողջապահության բնության պահպանության մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Հայկ Վարդևանյանը, անդամներ Արգամ Շառյանը, Ավետիք Ասոյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Միշա Եղիազարյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

*1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 19 և 23 բնակարանները Ալեքսանդր Արշակի Խաչատրյանին անհատույց օտարելու մասին:*
*2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 9 բնակարանը Արմեն Ռուբիկի Ազիզյանին անհատույց օտարելու մասին:*
*3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 60 և 63,64 բնակարանները Սիմոն Կամոյի Մարդոյանին անհատույց օտարելու մասին:*
*4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Ջրավար Անդրանիկի փողոց 44 շենքի 23 բնակարանը Ռիտա Ռուբենի Առաքելյանին անհատույց օտարելու մասին:*
*5.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 1 բնակարանը Վիրաբ Արամի Հարությունյանին անհատույց օտարելու մասին:*

**Համայնքի ավագանու որոշումների նախագծերի քննարկում:**

Օրակարգի առաջին՝ *Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 19 և 23 բնակարանները Ալեքսանդր Արշակի Խաչատուրյանին անհատույց օտարելու մասին,* Միշա Եղիազարյանը տեղեկացրեց, որ համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 08-ի N 44-Ա կարգադրությամբ ստեղծված ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման հարցերով զբաղվող հանձնաժողովը ուսումնասիրել է Բյուրեղավան քաղաքի 4-րդ հանրակացարան 17 և 23 սենյակների՝ նույնն է 20-23 սենյակներ, (ներկայիս՝ Օղակաձև փողոց 50 շենք 19 և 23 բնակարաններ) բնակիչ Ալեքսանդր Արշակի Խաչատուրյանի 2021 թվականի օգոստոսի 17-ի դիմումը և համայնքի ղեկավարին ներկայացրել է առաջարկություն Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 19 և 23 բնակարանները Ալեքսանդր Արշակի Խաչատուրյանին անհատույց օտարման հարցը համայնքի ավագանուն ներկայացնելու մասին:

«Հայապակի» բաժնետիրական ընկերության կողմից տրված Օրդերով Բյուրեղավան քաղաքի 4-րդ հանրակացարան 23-20 սենյակները հատկացվել է Ալեքսանդր Արշակի Խաչատուրյանի ընտանիքին:

Նա հաշվառված է և բնակվում է նշված հասցեում:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների և հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Ալեքսանդր Արշակի Խաչատուրյանի դիմումը, առաջարկվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 16.51 քմ ընդհանուր մակերեսով 19 և 21.87 քմ ընդհանուր մակերեսով 23 բնակարանները անհատույց օտարել (նվիրել) Ալեքսանդր Արշակի Խաչատուրյանին՝ ծնված 1955 թվականի փետրվարի 28-ին և սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Ալեքսանդր Արշակի Խաչատուրյանի կողմից:

**Որոշվեց՝**

***Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 19 և 23 բնակարանները Ալեքսանդր Արշակի Խաչատուրյանին անհատույց օտարելու մասին» որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:***

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի երկրորդ՝ *Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 9 բնակարանը Արմեն Ռուբիկի Աղիզյանին անհատույց օտարելու մասին,* հարցը նույնպես ներկայացրեց Մ. Եղիազարյանը:

Նա նշեց, որ համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 08-ի N 44-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովը ուսումնասիրել է Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 4-րդ հանրակացարանի 10 սենյակի՝ նույնն է 10/129 սենյակ, (ներկայիս՝ Օղակաձև փողոց 50 շենք 9 բնակարան) բնակիչ Արմեն Ռուբիկի Աղիզյանի 2021 թվականի օգոստոսի 17-ի դիմումը և համայնքի ղեկավարին ներկայացրել է առաջարկություն Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 9 բնակարանը Արմեն Ռուբիկի Աղիզյանին անհատույց օտարման հարցը համայնքի ավագանուն ներկայացնելու մասին:

«Հայապակի» արտադրական միավորման կողմից տրված Օրդերով Բյուրեղավան քաղաքի 4-րդ հանրակացարան 10/129 սենյակները հատկացվել է Աղիզյանների ընտանիքին:

Արմեն Ռուբիկի Աղիզյանը հաշվառված և բնակվում է նշված հասցեում:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Արմեն Ռուբիկի Աղիզյանի դիմումը՝ սույն նախագծով ավագանին որոշում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 21.98 քմ ընդհանուր մակերեսով 9 բնակարանը անհատույց օտարել (նվիրել) Արմեն Ռուբիկի Աղիզյանին՝ ծնված 1978 թվականի դեկտեմբերի 14-ին և սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Արմեն Ռուբիկի Աղիզյանի կողմից:

**Որոշվեց՝**

***Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 9 բնակարանը Արմեն Ռուբիկի Աղիզյանին անհատույց օտարելու մասին» որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:***

Կողմ- 3 Դեմ- 0

Հաջորդ՝ «*Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 60 և 63,64 բնակարանները Սիմոն Կամոյի Մարդոյանին անհատույց օտարելու մասին»* հարցի վերաբերյալ Մ. Եղիազարյանը ներկայացրեց, որ ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի

տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման հարցերով զբաղվող հանձնաժողովը ուսումնասիրել է Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 1-ին հանրակացարանի 107, 102-103 և 101 սենյակների (ներկայիս՝ 49 շենք 60 և 63,64 բնակարաններ) բնակիչ Սիմոն Կամոյի Մարդոյանի 2021 թվականի օգոստոսի 17-ի դիմումը և համայնքի ղեկավարին ներկայացրել է առաջարկություն Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 60 և 63,64 բնակարանները Սիմոն Կամոյի Մարդոյանին անհատույց օտարման հարցը համայնքի ավագանուն ներկայացնելու մասին:

Մարդոյանների ընտանիքը 10 և ավելի տարիներ բնակվել է նշված հասցեներում:

Սիմոն Կամոյի Մարդոյանը հաշվառված է Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 1-ին հանրակացարանի 101 հասցեում:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Սիմոն Կամոյի Մարդոյանի դիմումը՝ ավագանին սույն որոշման նախագծով որոշում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 14.09 քմ ընդհանուր մակերեսով 60 և 41.39 քմ ընդհանուր մակերեսով 63,64 բնակարանները անհատույց օտարել (նվիրել) Սիմոն Կամոյի Մարդոյանին՝ ծնված 1989 թվականի հոկտեմբերի 22-ին և սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Սիմոն Կամոյի Մարդոյանի կողմից:

**Որոշվեց՝**

***Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 60 և 63,64 բնակարանները Սիմոն Կամոյի Մարդոյանին անհատույց օտարելու մասին» որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:***

Կողմ- 3 Դեմ- 0

Հաջորդ՝ *Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց 44 շենքի 23 բնակարանը Ռիտա Ռուբենի Առաքելյանին անհատույց օտարելու մասին*, հարցի վերաբերյալ Մ. Եղիազարյանը ներկայացրեց, որ Համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 08-ի N 44-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովը ուսումնասիրել է Բյուրեղավան քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց 44 շենքի 23 բնակարանի բնակիչ

Ռիտա Ռուբենի Առաքելյանի 2021 թվականի սեպտեմբերի 6-ի դիմումը և համայնքի ղեկավարին ներկայացրել է առաջարկություն Բյուրեղավան քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց 44 շենքի 23 բնակարանը Ռիտա Ռուբենի Առաքելյանին անհատույց օտարման հարցը համայնքի ավագանուն ներկայացնելու մասին:

Ռիտա Առաքելյանը իր ընտանիքի հետ հաշվառված և 1987 թվականից բնակվում է վերը նշված հասցեում:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Ռիտա Ռուբենի Առաքելյանի դիմումը՝ ավագանին սույն որոշման նախագծով որոշում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց 44 շենքի 41.6 քմ ընդհանուր մակերեսով 23 բնակարանը անհատույց օտարել (նվիրել) Ռիտա Ռուբենի Առաքելյանին՝ ծնված 1959 թվականի հունվարի 15-ին և սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Ռիտա Ռուբենի Առաքելյանի կողմից:

**Որոշվեց՝**

***Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց 44 շենքի 23 բնակարանը Ռիտա Ռուբենի Առաքելյանին անհատույց օտարելու մասին» որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:***

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի վերջին՝ ***Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 1 բնակարանը Վիրաբ Արամի Հարությունյանին անհատույց օտարելու մասին,*** հարցի մասին Մ. Եղիազարյանը ներկայացրեց, որ ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման հարցերով զբաղվող հանձնաժողովը ուսումնասիրել է Բյուրեղավան քաղաքի 4-րդ հանրակացարան 51 սենյակի (ներկայիս՝ Օղակաձև փողոց 50 շենք 46 բնակարան) բնակիչ Վիրաբ Արամի Հարությունյանի 2021 թվականի սեպտեմբերի 01-ի դիմումը և համայնքի ղեկավարին ներկայացրել է առաջարկություն Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենք 1 բնակարանը Վիրաբ Արամի Հարությունյանին անհատույց օտարման հարցը համայնքի ավագանուն ներկայացնելու մասին:

Վիրաբ Հարությունյանը իր 4 չափահաս և 1 անչափահաս ընտանիքի անդամներով բնակվում է 50 շենքի 46 բնակարանի մեկ սենյականոց բնակարանում: Հաշվի առնելով Վիրաբ Հարությունյանի բնակարանային պայմանները՝ 50 շենքի 1 բնակարանը տրամադրվում է նրա ընտանիքի բնակարանային պայմանների բարելավման նպատակով:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Վիրաբ Արամի Հարությունյանի դիմումը ավագանին սույն որոշման նախագծով որոշում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 17.41 քմ ընդհանուր մակերեսով 1 բնակարանը անհատույց օտարել (նվիրել) Վիրաբ Արամի Հարությունյանին՝ ծնված 1970 թվականի մարտի 19-ին և սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Վիրաբ Արամի Հարությունյանի կողմից:

**Որոշվեց՝**

***Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 1 բնակարանը Վիրաբ Արամի Հարությունյանին անհատույց օտարելու մասին» որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:***

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ ՝ ______________ Հայկ Վարդանյան

Հանձնաժողովի անդամներ՝ ______________ Արգամ Շառյան

______________ Ավետիք Ասոյան